ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 688 – Ա 14 դեկտեմբերի 2021 թ.

ԱՐԹՈՒՐ ԳՐԻՇԱՅԻ ՍՈՒՎԱՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ՎԱՂԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ի N 605-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ հոդվածի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Գեղարքունիքի մարզային մարմնի 2021 թվականի նոյեմբերի 22-ի գրությունը

որոշում եմ՝

1. Արթուր Գրիշայի Սուվարյանին 2021 թվականի դեկտեմբերի 14-ից ազատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրից բաղկացած Վաղաշեն համայնքի ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնից:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2021 թվականի նոյեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի գյուղական բնակավայրից բաղկացած Վաղաշեն համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու մասին» N 605-Ա որոշումը:

14.12.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ